ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1/1

«ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԿՈԼԵԳԻԱ»

ինքնակարգավորվող կազմակերպության դիտորդ խորհրդի և կարգապահական հանձնաժողովի 10.05.2011թ. ընդլայնված նիստի

Մասնակցությամբ՝

Կարգապահական հանձնաժողովի նախագահ՝ Խաչատուր Ղահրամանյանի

Հանձնաժողովի անդամներ՝ Գագիկ Բարխուդարյանի, Աղասի Արսենյանի, Արման Սարգսյանի, Սոֆյա Դավթյան

Դիտորդ խորհրդի նախագահ՝ Հրանտ Ղամբարյանի

Խորհրդի անդամներ՝ Լևոն Պետրոսյանի, Ռուբեն Խալաթյանի, Վահագն Ավագյանի

Օրակարգում

Սնանկության գործերով կառավարիչ Ռոբերտ Արամի Մարգարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցի քննարկումը:

Նիստին ներկայացել էր «Արմաս» ՍՊԸ-ի սնանկության կառավարիչ Ռոբերտ Արամի Մարգարյանը, չէր ներկայացել դիմումատու՝ Արմեն Մկրտչյանը, սակայն նույն օրը նախօրոք «ՍԳԿԿ» ԻԿԿ գրասենյակ էր ներկայացրել դիմում, որով հայտնել էր, որ *նպատակահարմար չի գտնում մասնակցել 10.05.2011թ-ի նիստին:*

Կարգապահական հանձնաժողովի անդամները որոշեցին 10.05.2011թ. նշանակված նիստը անցկացնել դիմումատու՝ Արմեն Մկրտչյանի բացակայությամբ:

Կարգապահական հանձնաժողովի նախագահ Խ.Ղահրամանյանը ներկայացրեց «Արմաս» ՍՊԸ-ի սնանկության կառավարիչ Ռոբերտ Մարգարյանին նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի կապակցությամբ դիմող Արմեն Մկրտչյանի 10.05.2011թ. դիմումն ամբողջությամբ:

«Արմանս» ՍՊԸ-ի սնանկության կառավարիչ Ռոբերտ Մարգարյանը հանձնաժողովին ներկայացրեց գործին առնչվող որոշ փաստաթղթեր, որոնց վերաբերյալ տվեց բացատրություններ: Հարցեր առաջադրելուց և պատասխաններ տրվելուց հետո, կառավարիչ Ռոբերտ Մարգարյանը միջնորդեց հետաձգել նիստը՝ գրավոր առարկություն և ապացույցներ ներկայացնելու պատճառաբանությամբ:

Հանձնաժողովը քննության առնելով կառավարիչ Ռոբերտ Մարգարյանի միջնորդությունը, միաձայն ո ր ո շ ե ց՝ հետաձգել լսումը և կարգապահական հանձնաժողովի նիստ նշանակել 17.05.2011թ. ժ. 15.00-ին:

Դիտորդ խորհրդի նախագահ Հ. Ղամբարյան

Կարգապահական հանձնաժողովի Նախագահ Խ.Ղահրամանյան